# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
## N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/9-Հ/2016 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան << 22 >> 02 2018թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԼԻԿԱՆՏԵ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Պրոնիչչևի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 22.11.2016թ.-ին կնքված N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/9-Հ/2016 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 4.1 և 7.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան, գինը և վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան հաստատել N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/9-Հ/2016 ծածկագրով գնման Պայմանագրի շրջանակներում 2018 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում մատուցվող ծառայությունների համար նախատեսված 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի վճարումը: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց Պատվիրատուն վճարումը կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-60-39
Էլ. փոստ: police_gnumner@mai.ru

__________ Ա. Համբարյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
<<Ալիկանտե>> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 155/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012604290100
ՀՎՀՀ 01014536
Էլ. Փոստ: alikante60@mail.ru

__________ Ա.Պրոնիչչև
(ստորագրություն) /տնօրեն/
Կ.Տ

Հավելված N 1

<<22>> 02 2018թ.

N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/9-Հ/2016 գնման պայմանագրի թիվ 3 համաձայնագրի

## Վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ՝ ՃՌ արտաբյուջեից ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | Էլեկտրական սարքերի /հետադարձ հաշվարկի թվատախտակի/ վերանորոգման և սպասարկման ծառայություն | | 1500000 | 1500000 | 1500000 | 1500000 | 1500000 | 1500000 | 1500000 | 1500000 | 1500000 | 1500000 | 1500000 | 1500000 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | 1500000 |

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ ոստիկանություն

ք. Երևան, Նալբանդյան 130

ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900013150041

ՀՎՀՀ 01840082

հեռ. 59-60-39

Էլ. հասցե: police_gnumner@mail.ru

Ա. Համբարյան

/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/

(ստորագրություն) Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

<<Ալիկանտե>> ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 155/2

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570012604290100

ՀՎՀՀ 01014536

Էլ. Փոստ: alikante60@mail.ru

Ա. Պրոնիշչև

տնօրեն

(ստորագրություն)

Կ.Տ